



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

10-ը հունվարի, 2023թ.

Լիանա Ղալթաղյանը նշանակվել է «Հայաստանի մանուկներ» (COAF) բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն

ԵՐԵՎԱՆ - [«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը \(COAF\)](#) հայտնում է Լիանա Ղալթաղյանի՝ COAF-ի գործադիր տնօրեն նշանակվելու մասին: 2023 թվականի հունվարի 9-ից Լ.Ղալթաղյանը ղեկավարում է Հիմնադրամի գործառնական, իրավական և ֆինանսական ոլորտները:

Լ.Ղալթաղյանի փորձառությունը և համապարփակ գիտելիքը տարբեր ռազմավարական ոլորտներում, ինչպես նաև միջազգային և պետական կառույցներում աշխատանքը կնպաստեն COAF-ի ընդլայնմանը և Հայաստանի ու Արցախի գյուղական համայնքների զարգացմանը:

«Լիանայի ավելի քան 15 տարվա հարուստ աշխատանքային փորձը, ղեկավարման հմտությունները կատարելապես համապատասխանում են այս կարևոր ղեկավար պաշտոնը զբաղեցնելու համար», - ասաց COAF-ի հիմնադիր և խորհրդի նախագահ դոկտոր Կարո Արմենը: «Երկրի համար այս կարևոր պահին նա արժեքավոր համալրում կլինի մեր ղեկավար թիմում»:

Լ. Ղալթաղյանը մեծ փորձ ունի առողջապահության, կրթության և սոցիալական հարցերի ոլորտները համակարգելու գործում՝ նախկինում զբաղեցնելով ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնը: Հանրային գործունեության ոլորտում նրա փորձը ներառում է նաև օրենսդրական աշխատանքը ՀՀ արդարադատության նախարարությունում: Պետական հանրային պաշտոններից բացի Ղալթաղյանը նաև տարբեր պաշտոններ է զբաղեցրել մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպություններում, այդ թվում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունում (USAID) և Թրանսփարենսի հնթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնում:

Լ.Ղալթաղյանն ունի գործընկերությունների զարգացման և թիմային առաջնորդության լայն և հաջողված փորձ: Նրա ձեռքբերումները ներառում են լավ կառավարման խթանմանն ուղղված տարբեր նախաձեռնություններ, ինչպես նաև՝ հանրային թափանցիկությանն ու հաշվետվողականության բարձրացմանը միտված ծրագրեր:

Լիանա Ղալթաղյանի կազմակերպչական պարտականությունների լայն շրջանակի առաջնահերթ ուղղություններից մեկը լինելու է COAF-ի հաջողված ՍՄԱՐԹ կենտրոնի

մողելի ընդլայնումը, որի միջոցով Հայաստանի գյուղական համայնքներում իրականացվում են համաշխարհային մակարդակի ոչ ֆորմալ կրթության և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր: COAF ՍՄԱԲ կենտրոնն իրականացնում է լավագույն արտադրողական կրթական ծրագրերը Հայաստանի գյուղական համայնքներում, այդ թվում՝ լեզուների, երեխայի զարգացման, տեխնոլոգիաների, արվեստի, սպորտի, առողջապահության, շրջակա միջավայրի և այլ ուղղություններով: Առաջին COAF ՍՄԱԲ կենտրոնը բացվել է 2018 թվականին Լոռու մարզում: Առաջիկա հինգ տարում COAF-ը 50 մլն ԱՄՆ դոլարից ավելի ներդրումով կգործարկի ևս չորս նոր ՍՄԱԲ կենտրոններ Արմավիրի, Սյունիքի (Կապան և Գորիս) և Ծիրակի մարզերում: COAF-ի տեսլականն է հզորացնել մեր գյուղաբնակ սերունդների կարողությունները՝ ՍՄԱԲ կենտրոններ հիմնելով Հայաստանի բոլոր մարզերում:

«Ինձ համար մեծ պատիվ է միանալ COAF-ի նվիրյալ և տաղանդավոր թիմին, օժանդակել կազմակերպությանը ընդլայնվելու և հասնելու զարգացման հաջորդ հանգրվանին՝ լավագույնս ծառայելով Հայաստանի գյուղական համայնքների կարիքներին», - նշում է Լ. Ղալթաղյանը:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (COAF) շահույթ չհետապնդող, ոչ կառավարական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի և կարիքների վրա: COAF-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: COAF-ը մեկնարկել է իր ծրագրերը 2004թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից՝ ընդլայնվելով ողջ երկրի տարածքով՝ ավելի քան 60 գյուղերում ու համայնքներում՝ ներդնելով ավելի քան 70 մլն ԱՄՆ դոլար՝ 100,000-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:
